

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱԺԱՆՍԱՆ ՆԵՐԿԱ ՀԱՄԱԿԱՐԳՈՄ

## Գ. Ս. ՍԵԳՐԱԿՅԱՆ

Այսօր, երբ համաշխարհային տնտեսությանը հատուկ են տնտեսական աճի արագ տեմպեր, հույժ կարևոր է դառնում Հայաստանի տնտեսության համապատասխանեցումը միջազգային չափանիշներին և արդյունավետության ցուցանիշներին: Ո՞րն է Հայաստանի դերը աշխատանքի միջազգային բաժանման ներկա համակարգում, և ի՞նչ ուղղություններով այն կարող է զարգանալ: Կարո՞ղ է արդյոք մեր տնտեսությունը, առկա (սահմանափակ) ռեսուրսները արդյունավետ օգտագործելով, միջազգային շուկայում մասնագիտանալ որոշ ապրանքների արտադրության մեջ և կազմակերպել դրանց արտահանումը:

Ինչպես գիտենք, ԽՍՀՄ ժամանակաշրջանում Հայաստանի արտահանման մեջ հիմնական մասը կազմում էր վերամշակվող արդյունաբերական ճյուղերի արտադրանքը (մեքենաներ և սարքավորումներ, տրանսպորտի միջոցներ, քիմիայի և նրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք): Տնտեսական և հատկապես էներգետիկ ճգնաժամի պայմաններում այս ճյուղերի ձեռնարկությունները մատնվեցին անգործության: Ադետալի չափերով կրճատվեց համախառն ներքին արդյունքի ծավալը: Հարց է առաջանում. կարո՞ղ էր արդյոք Հայաստանը ապահովել տնտեսական աճ և կազմակերպել նախկին ծավալներին համապատասխան արտահանում, եթե չլիներ տնտեսական ճգնաժամը: Ինչպես գիտենք, Հայաստանի հիմնական առևտրային գործընկերները նախկին խորհրդային և սոցիալիստական երկրներն էին, և արտահանման (ինչպես նաև ներմուծման) հիմնական բաժինը այս երկրների հետ էր: Նախապես պլանավորված գների, քանակի և առաքման վայրի պայմաններում թողարկվող արտադրանքի որակը ավելի ու ավելի քիչ դեր էր խաղում: Արտադրության ծավալների ընդլայնումը կրում էր հիմնականում էքստենսիվ բնույթ, իսկ աշխատանքի արտադրողականության աճի տեմպը, սկսած 60-ական թվականների վերջերից, ավելի ու ավելի էր հետ մնում զարգացած երկրներին հատուկ ցուցանիշից:

ԽՍՀՄ անկումից հետո առաջինը կապերը խզվեցին Եվրոպայի նախկին սոցիալիստական երկրների հետ, որոնք միանգամից իրենց հայացքներն ուղղելով դեպի արևմուտք՝ սկսեցին փնտրել նոր առևտրային գործընկերներ՝ ձգտելով արտադրության արդյունավետության չափանիշները համապատասխանեցնել արևմտյանին: Դա առաջին հերթին ենթադրում էր ժամանակակից արտադրության միջոցների, մեքենաների և սարքավորումների ձեռքբերում զարգացած երկրներից: Չարգացած երկրների լայն չափերի հասնող ֆինանսական օգնությունը (կառուցվածքային, տեխնիկական վարկեր և այլն) թույլ տվեց նրանց կապիտալ ներդրումներ կատարել արդյունաբերության ոլորտում և ավելի թեթև տանել տրնտեսական ճգնաժամը:

Նախկին ԽՍՀՄ-ում քաղաքական անկայուն իրավիճակի պատճառով արագ խզվեցին կապերը նաև խորհրդային հանրապետությունների միջև, և համապատասխան ֆինանսական օգնության բացակայության պայմաններում ազգային անկախացած տնտեսությունները հայտնվեցին կաթվածահար վիճակում: Նույնիսկ Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծումը չչտկեց իրավիճակը: Ավելին, Հայաստանը հայտնվեց ավելի ծանր վիճակում: Ադրբեջանի հետ հակամարտության պատճառով ամբողջ արևելյան սահմանը փակվեց, և հիմնական սնուցող ճանապարհները, ինչպիսիք են գազամուղը և երկաթգիծը, դադարեցին գործել: Միակ ճանապարհը դեպի Ռուսաստան, որը Հայաստանի հիմնական առևտրատնտեսական գործընկերն է, անցնում էր Վրաստանով, որն էլ իր հեր-

թին գտնվում էր քաղաքացիական և ազգային հակամարտությունների մեջ: Թուրքիայի՝ մեր արևմտյան հարևանի և Ադրբեջանի գլխավոր ռազմավարական գործընկերոջ հետ Հայաստանը դեռևս չունի դիվանագիտական հարաբերություններ: Այս սահմանը ամենամոտն է Մև ծովին և թուրքական Տրապիզոն նավահանգստին, որից օգտվելը հսկայական առավելություն կլիներ մեր տնտեսության համար: Այս իրավիճակում կարևորվեց Իրանի դերը, որը շուտով դարձավ մեր գլխավոր առևտրատնտեսական գործընկերներից մեկը:

Մեզ պայմաններում Հայաստանը պետք է մեր գործընկերներ փնտրեր ԽՍՀՄ սահմաններից դուրս: Եթե նույնիսկ Հայաստանում պահպանվեր թողարկվող արտադրանքի նախկին ծավալը (ենթադրենք՝ չկա շրջափակում և էներգետիկ ճգնաժամ), ապա, ամենայն հավանականությամբ, Հայաստանը չէր կարող կազմակերպել արդյունավետ արտահանում, քանի որ թողարկվող արտադրանքի որակը հիմնականում չէր համապատասխանում միջազգային չափանիշներին: Հայաստանի և մյուս ինդուստրիալ երկրների միջև «տեխնոլոգիական խզումը» (ենթադրվում է, որ Հայաստանը նույնպես ինդուստրիալ երկիր է) հասել էր այնքան մեծ չափերի, որ անհրաժեշտ էին լայնածավալ կապիտալ ներդրումներ գրեթե բոլոր ճյուղերում՝ արդյունաբերությունը զարգացնելու և թողարկվող արտադրանքի որակական չափանիշները բարձրացնելու համար:

Հայաստանի տեղը աշխատանքի միջազգային բաժանման ներկա համակարգում հասկանալու համար նախ կատարենք նախորդ երեք տարիների արտաքին առևտրի վերլուծությունն ըստ առանձին ապրանքատեսակների (տե՛ս աղյուսակ 1):

Ինչպես տեսնում ենք, Հայաստանը բոլոր ապրանքատեսակների գծով ունի բացասական հաշվեկշիռ: Բացառություն են կազմում կաշվի հումքի, մորթու և դրանցից պատրաստված արտադրանքը, կիսաթանկարժեք քարերը, ոչ թանկարժեք և թանկարժեք մետաղները: Նույնիսկ այնպիսի ավանդական ճյուղը, ինչպիսին քարի-մշակումն է, ունի բացասական հաշվեկշիռ:

**Արտաքին առևտուրն ըստ ապրանքատեսակների  
(ընթացիկ գներով 1000 ԱՄՆ դոլար)**

*Աղյուսակ 1*

Ապրանքատեսակ	1995		1996		1997	
	արտահանում	ներմուծում	արտահանում	ներմուծում	արտահանում	ներմուծում
Ընդամենը՝ այդ քվում	219972	590579	290313	861508	232621,7	893367,7
Կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	130	51769	138	67359	309,6	58534,7
Բուսական ծագման արտադրանք	388	76129	928,5	114872	2801,7	105371
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	0	22253	109,8	26368	414,1	24604,3
Պատրաստի սննդի արտադրանք	9157	44981	11768	83019	24620	86055,1
Հանքահումքային արտադրանք	27154	203513	19139	192212	17872,7	210648
Քիմիայի և նրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	6929	50452	5422,4	56109	4327,4	85185,3
Պլաստմասա և դրանցից իրեր	10226	3198	8234,9	13551	9197,7	23513,5

Կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	1157	243	1437,5	1279	2333	1716,5
Փայտ և փայտյա իրեր	9	898	209,6	1348	186,3	2727,3
Թուղթ և թղթից իրեր	873	7649	530	12652	1052,9	16087,9
Մանածագործական իրեր	13620	7049	9728,8	20967	10565,6	33574,8
Կոշիկեղեն, զվարկներ	5320	716	2187,2	49337	735,5	9979,2
Իրեր քարերից	1908	2273	1755,1	8692	1218,5	15665
Կիսաքանկարժեք և քանկարժեք քարեր	68836	44835	140288	129802	55214,9	47472,4
Ոչ քանկարժեք մետաղներ	25179	15087	47304	10242	57697,3	24614,9
Մեքենաներ և սարքավորումներ	31337	45648	34304,1	80457	32282,1	102190
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	10920	5640	2683	12014	2032,5	15709,8
Սարքեր և ապարատներ	3390	5102	2488,2	10970	4817,7	14055,1
Տարբեր արդյունաբերական սարանքներ	3164	2739	1530,7	13638	4922,9	15652,1
Արվեստի ստեղծագործություններ	279	405	127,1	1021	19,3	10,8

Աղբյուր՝ Հայաստան տնտեսական միտումներ (ՀՏՄ), հաշվարկներ ըստ ՀՀ վիճակագրության տվյալների, 1998 թ. հունիս

Ինչպես տեսնում ենք մանածագործական իրերի և կոշիկեղենի արտահանման միտումները կայուն չեն, և տարբեր տարիներին հաշվեկշիռը կամ դրական է, կամ բացասական: Վերը նշված դրական հաշվեկշռով ապրանքատեսակները ունեն նաև արտահանման մեջ ամենամեծ տեսակարար կշիռը:

Ներմուծման մեջ ամենամեծ տեսակարար կշիռը ունեն հանքահումքային արտադրանքը, մեքենաները և սարքավորումները:

Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանը վերջին տարիներին մասնագիտացել է ոչ գիտատար ապրանքների արտադրության մեջ: Մա նշանակում է, որ մեր հանրապետությունը այժմ գտնվում է տնտեսության ինդուստրիալիզացման առաջին փուլում: Տնտեսական աննախադեպ անկումից հետո հանրապետության տնտեսական վիճակն ընդունելով որպես գորյակյան տարբերակ՝ կարելի է ասել, որ այժմ զարգացնելով ոչ գիտատար ճյուղերի արտադրությունը և արտահանումը, կուտակվում է կապիտալ՝ արդյունաբերության գիտատար ճյուղերի զարգացման համար:

Դիշտ արտահանում կազմակերպելու համար անհրաժեշտ է հաշվարկել, թե որ ճյուղերում է, որ այժմ Հայաստանը ունի համեմատական առավելություն: Առաջիկա տարիներին մեծացնելով այդ ճյուղերի արտադրությունը և արտահանումը՝ հնարավոր կլինի պարարտ հող ստեղծել մյուս ճյուղերի զարգացման համար: Տվյալ երկրի որևէ ապրանքախմբի համար «փաստացի համեմատական առավելություն» գործակցի հաշվարկի մեթոդը հորինել է Բ. Բալաշը ղեռ 1965 թ-ին:

Իսկ 1986 թ-ին ՄԱԿ-ի միջազգային զարգացման կազմակերպության հրատարակած ուղեցույցում այդ գործակցի հաշվարկի համար առաջարկվում է օգտագործել հետևյալ բանաձևերը<sup>1</sup>:

<sup>1</sup> Unido- «International Comparative Advantage in manufacturing», 1986.

$$RCA_{ij} = \frac{(X_{ij}-M_{ij})}{Tk_j(Tiw/Tkw)}$$

որտեղ X-ը արտահանումն է, M-ը ներմուծումն է,  
i-ը՝ ապրանքը, j-ը՝ երկիրը, k-ը՝ ողջ ապրանքը, w-ը՝ աշխարհը:

$$T = \frac{X+M}{2}$$

Կատարենք մի քանի պարզաբանումներ. (X+M)-ը j երկրի կողմից I ապրանքի զուտ արտահանումն է կամ ներմուծումը, Tk-w-ն ամբողջ համաշխարհային ապրանքաշրջանառությունն է՝ բաժանած 2-ի, Tiw-ն i ապրանքի համաշխարհային շրջանառությունն է՝ բաժանած 2-ի Tkj-ն j երկրի ողջ ապրանքաշրջանառությունն է՝ բաժանած 2-ի, Tiw / Tk-w-ն i ապրանքի տեսակարար կշիռն է համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ: Եթե արտահանումը մեծ է ներմուծումից, ապա գործակիցը դրական է, եթե ոչ՝ բացասական: Որքան մեծ է արտահանումը ներմուծումից, այնքան մեծ է գործակիցը:

Հայաստանի տարբեր ապրանքային խմբերի համար հաշվարկենք «փաստացի համեմատական առավելության» գործակիցը և պարզենք, թե որ ապրանքների գծով մեր հանրապետությունը ունի համեմատական առավելություն, և ինչ մեծության է այդ գործակիցը (աղյուսակ 2):

**Հայաստանի «փաստացի համեմատական  
առավելությունների» գործակիցը տարբեր ապրանքախմբերի համար 1995,  
1996 և 1997 թվականներին**

*Աղյուսակ 2*

Ապրանքախմբերը	RCA <sub>ij</sub>		
	1995	1996	1997
1. Կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	-6,07	-5,5	-4,9
2. Պատրաստի սննդի արտադրանք	-3,5	-4,9	-4,7
3. Քիմիայի և նրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	-1,19	-0,98	-1,6
4. Մանածագործական իրեր	0,42	-0,5	-1,1
5. Կաշի, մորթի և դրանից արտադրված իրեր	0,23	0,027	0,12
6. Մեքենաներ և սարքավորումներ	-0,14	-0,32	-0,49
7. Տրանսպորտի միջոցներ	0,072	-0,093	-0,14
8. Սև և գունավոր մետաղներ	0,19	0,51	0,62
9. Կիսաթանկարժեք և թանկարժեք քարեր	3,48	1,07	0,86

Աղյուսակից կարելի է նկատել, որ Հայաստանը կայուն համեմատական առավելություն ունի միայն երեք ապրանքային խմբերի գծով: Տրանսպորտային միջոցների 1995 թ. դրական գործակիցը ժամանակավոր բնույթ է կրում՝ կապված ներմուծման փոքր ծավալմե-

րի հետ: Թեև սև և գունավոր մետաղների գծով բոլոր երեք տարիների համար արձանագրվում է դրական գործակից, սակայն պետք է հաշվի առնել, որ մեքենաշինական խոշոր ձեռնարկությունների պարապուրոյի պատճառով կտրուկ նվազել է սև մետաղների ներմուծումը, և ավելացել է մետաղի ջարդոնի արտահանումը, որը չի կարելի համարել դրական միտում:

Այսպիսով, արտադրությունը զարգացնելու և արդյունավետ արտահանում կազմակերպելու համար նախ և առաջ պետք է խթանել այն ճյուղերի զարգացումը, որոնք արդեն իսկ ունեն համեմատական առավելություն: Արդյունքում կուտակված կապիտալը կներդրվի գիտատար և կապիտալատար ոլորտներում (մեքենաշինություն, սարքաշինություն և այլն)՝ արտադրության վերազինման և թողարկվող արտադրանքի ծավալների ընդլայնման համար, և հնարավորություն կստեղծվի նաև տվյալ ոլորտների գծով կազմակերպել արդյունավետ արտահանում: Իհարկե, արդյունավետ ճյուղերի միջոցով կուտակված կապիտալը դեռ բավարար աղբյուր չէ իրական ներդրումների համար, և այն պետք է զուգակցվի արտաքին ներդրումներով, որոնք պետք է ներդրվեն հատկապես գիտատար և կապիտալատար ոլորտներում: Մակայն մինչ այժմ Հայաստանում քիչ թե շատ մեծ ծավալներով արտաքին ներդրումներ կատարվել են բուսական ծագման արտադրանքի վերամշակման ոլորտում, իսկ աշխարհում դժվար թե գտնվի մի երկիր, որը չունի համեմատաբար ժամանակակից ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և «Կոկա-Կոլայի» գործարան:

Այժմ տեսնենք թե ինչ տեղաշարժեր են տեղի ունեցել Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության մեջ վերջին մեկ տարվա ընթացքում (տե՛ս աղյուսակ 3): «1998 թ-ի առաջին կիսամյակին Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 628,9 մլն ԱՄՆ դոլար: Այդ թվում արտահանումը կազմել է 142,3 մլն դոլար, իսկ ներմուծումը 486,6 մլն դոլար: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 344,3 մլն դոլարով, իսկ առանց մարդասիրական օգնության՝ ստացված բեռների՝ 289,6 մլն դոլարով»<sup>2</sup>:

Որպես դրական միտում կարելի է համարել այն փաստը, որ արտաքին առևտրաշրջանառության ծավալը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 28,2 %-ով, իսկ ներմուծումը՝ 2,9 %-ով:

«Դրա արդյունքում առևտրային բացասական հաշվեկշիռը կրճատվել է 4,9 %-ով: 1998 թ. հունվար-հուլիսին հանրապետությունից արտահանված ապրանքների ընդհանուր ծավալի 21,3 % -ը կազմել են մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները, թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը, ոսկերչական իրերը, 18,5 %-ը՝ ոչ թանկարժեք մետաղները-և դրանցից արտադրված իրերը, 10,3 %-ը՝ հանքահումքային արտադրանքը, 8,8 %-ը՝ պատրաստի սննդի արտադրանքը: Ներուծման մեջ առավել մեծ տեսակարար կշիռ են կազմել սննդի արդյունաբերության, կենդանական և բուսական ծագման արտադրանքը՝ 35,6 %, հանքահումքային արտադրանքը՝ 21,8 %, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը՝ 9,5 %, մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները՝ 7,6 %, մշակված և անմշակ ալմաստները, թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը, ոսկերչական իրերը՝ 5,2 %»<sup>3</sup>:

Ինչպես և նախորդ երեք տարիներին, առևտրային հաշվեկշիռը դրական է միայն նույն երեք ապրանքախմբերի գծով: Արվեստի ստեղծագործությունների դրական հաշվեկշիռը կարելի է հաշվի չառնել նրա փոքր տեսակարար կշռի և երկրորդ՝ տեղի ունեցող տնտեսական գործընթացների հետ թույլ կապի պատճառով: Մա նշանակում է, որ Հայաստանը շարունակում է պահպանել համեմատական առավելությունը այս երեք ապրանքախմբերի գծով:

Նախորդ տարիների համեմատությամբ դրական միտում կարելի է համարել այն փաստը, որ արտահանման ծավալի 28,2 %-ով աճը (1997 թ-ի հունվար-հուլիսի նկատմամբ) հիմնականում տեղի է ունեցել «մեքենաների, սարքավորումների և մեխանիզմների՝ 2,6 անգամ, սարքերի և ասպարատների՝ 4 անգամ, հանքահումքային արտադրանքի՝ 2,1 անգամ, տարբեր արդյունաբերական ապրանքների՝ 4,3 անգամ, մանածագործական իրերի՝ 1,2 անգամ, արտահանման ծավալների աճի շնորհիվ: 53,1 %-ով նվազել է բուսական ծագման արտադ-

<sup>2</sup> Tacis, Հայաստան տնտեսական միտումներ, հաշվարկներ ըստ ՀՀ վիճակագրության տվյալների, հունիս, 1998:

<sup>3</sup> Նույն տեղում:

Արտաքին առևտուրն ըստ առանձին ապրանքատեսակների  
1998 թ. հունվար-հուլիսին (ընթացիկ գներով՝ 1000 ԱՄՆ դոլար)

Աղյուսակ 3

Ապրանքատեսակը	արտահանում	ներմուծում	հաշվեկշիռ
Ընդամենը	142301,2	486553,8	-344252,7
Կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	72,6	25659,6	-25587,0
Բուսական ծագման արտադրանք	789,9	74443,7	-73653,8
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	37,5	11788,3	-11750,8
Պատրաստի սննդի արտադրանք	12515,6	61302,2	-48786,7
Հանքահումքային արտադրանք	14629,2	105953,1	-91323,9
Քիմիայի և դրանց հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	1249,7	46212,3	-44962,6
Պլաստմասա և դրանից իրեր	4767,8	14838,5	-10070,7
Կաշվի հումք, կաշի, նորթի և դրանցից պատրաստված իրեր	770,4	542,3	228,1
Փայտ և փայտյա իրեր	105,6	2136,6	-2031,0
Թուղթ և թղթից իրեր	175,9	12044,3	-11868,4
Մանածագործական իրեր	7817,7	16811,1	-8993,4
Կոշիկեղեն, գլխարկներ, հովանոցներ	450,6	3017,3	-2566,7
Իրեր քարից, ցեմենտից, գիպսից	598,3	9985,4	-9387,1
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	30244,9	25081,6	5163,3
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	26378,6	11764,9	14613,7
Մեքենաներ և սարքավորումներ	33223,7	36834,3	-3610,6
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	1395,8	15037,2	-13641,4
Սարքեր և ապարատներ	4798,0	6838,4	-2040,3
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	2261,3	6262,5	-4001,2
Արվեստի ստեղծագործություններ	18,0	0,4	17,6

Աղբյուր՝ ՀՀ վիճմախարարության տվյալների, 1998 թ. հուլիս:

րանքի, 41,4 %-ով՝ քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքի, 43,3 %-ով՝ կաշվի հումքի, կաշվի, մորթու և դրանցից պատրաստված իրերի և 23,8 %-ով ոչ քանկարժեք մետաղների և դրանից պատրաստված իրերի արտահանումը»<sup>4</sup>: Փաստորեն այս վերջին երկու ապրանքախմբերի գծով «փաստացի համեմատական առավելության» դրական գործակիցը նվազել է:

«1997 թ-ի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 1,4 անգամ աճել են պատրաստի սննդի արտադրանքի, 1,3 անգամ՝ բուսական ծազման արտադրանքի, 1,7 անգամ՝ թղթի և թղթյա իրերի, 1,7 անգամ՝ փայտի և փայտյա իրերի, 1,3 անգամ՝ պլաստմասայի և դրանից իրերի, 1,4 անգամ՝ քարից, գիպսից, ցեմենտից իրերի և 1,5 անգամ՝ վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի ներմուծման ծավալները:

Միև նույն ժամանակ 33,7 %-ով նվազել են կենդանիների և կենդանական ծազման արտադրանքի, 33,6 %-ով՝ կենդանական և բուսական ծազման յուղերի և ճարպերի, 48,4 %-ով՝ կոշկեղենի, գլխարկների և հովանոցների, 21,8 %-ով՝ սարքերի և ապարատների ներմուծման ծավալները»<sup>5</sup>:

Այժմ Հայաստանի տեղը աշխատանքի միջազգային բաժանման ներկա համակարգում ավելի լավ հասկանալու համար հաշվարկենք, թե արտաքին առևտրային շրջանառության մեջ որքան է հանդիպակաց արտահանման և ներմուծման տեսակարար կշիռը: Դրա համար օգտագործենք տնտեսագետներ Գրաբեյի և Լյոդի առաջարկած՝ ներճյուղային առևտրի ինդեքսի բանաձևը<sup>6</sup>:

$$B = \frac{(x_i + M_i) - (x_j - M_j)}{(x_i + M_i)} \cdot 100$$

«Որքան այդ գործակիցը ավելի մոտ լինի 100-ին, այնքան դա նշան է այն բանի, որ այդ ճյուղի թողարկած արտադրանքը մոտ է միջազգային չափանիշներին: 100 գործակիցը նշանակում է արտահանման և ներմուծման հավասար ծավալներ, իսկ 0-ին մոտ գործակիցը՝ արտահանումը գերակշռում է ներմուծմանը (կամ ընդհակառակը)»<sup>7</sup>: Արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը (արյուսակ 4):

**Հայաստանի ներճյուղային առևտրի գործակիցը 1998 թ-ի հունվար-հուլիս ամիսների համար**

**Աղյուսակ 4**

Ճյուղը	Գործակիցը
1. Գյուղատնտեսություն	1,7 (ներմուծում)
2. Մեքենաշինություն (առանց տրանսպորտային միջոցների)	89,3 (ներմուծում)
3. Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	16,9 (ներմուծում)
4. Քիմիական արդյունաբերություն	4,1 (ներմուծում)
5. Թեթև արդյունաբերություն	61,4 (ներմուծում)
6. Փայտամշակում, թղթի արդյունաբերություն	3 (ներմուծում)
7. Սննդի արդյունաբերություն	29,3 (ներմուծում)
8. Մետալուրգիա	61,7 (արտահանում)

Այն դեպքում, երբ ներմուծումը գերակշռում է արտահանմանը կամ ընդհակառակը, մենք արյուսակում գործակցից հետո պայմանականորեն նշել ենք «ներմուծում» կամ «արտահանում»:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Steu H. Grubel, P. Lloyd, «Intra-Industry Trade», 1975:

<sup>7</sup> Նույն տեղում:

Անհրաժեշտ տվյալները ստանալու համար մեր կողմից կատարվել են մի շարք պայմանական խմբավորումներ (տե՛ս աղյուսակ 3): «Կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» և «բուսական ծագման արտադրանք» ապրանքատեսակները գումարվել են և համարվել գյուղատնտեսական արտադրանք, համապատասխանաբար՝ «պատրաստի սննդի արտադրանք» և «կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր» վերնագրերը՝ սննդի արդյունաբերություն, «փայտ և փայտյա իրեր» և «թուղք և թղթից իրեր» շարքը՝ փայտամշակում և թղթի արդյունաբերություն, «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» և «պլաստմասա և դրանից իրեր» վերնագրերը՝ քիմիական արդյունաբերություն, «կաշվե հումք, կաշի, մորթի և դրանից պատրաստված իրեր», «մանածագործական իրեր» և «կոշիկեղեն, գլխարկներ, հովանոցներ» վերնագրերը՝ թեթև արդյունաբերություն, «մեքենաներ և սարքավորումներ», «սարքեր և ապարատներ» և «տարբեր արդյունաբերական ապրանքներ» վերնագրերը՝ մեքենաշինություն, «ոչ թանկարժեք մետաղներ և դրանից պատրաստված իրեր» վերնագիրը՝ մետալուրգիա: Տրանսպորտի միջոցների արտադրությունն առանձնացվել է մեքենաշինությունից՝ հաշվի առնելով այս ոլորտի առանձնահատուկ դերը ժողովրդական տնտեսության մեջ:

Աղյուսակ 4-ից կարելի է եզրակացնել, որ չնայած բացասական հաշվեկշիռն, միայն մեքենաշինության և թեթև արդյունաբերության ճյուղերի գծով տեղի է ունենում ակտիվ արտաքին ներճյուղային առևտուր: Սա նշանակում է, որ այս ճյուղերի արտադրանքը սկսում է ճանաչում գտնել միջազգային շուկայում (հատկապես ԱՊՀ երկրներ և Մերձավոր Արևելք):

Ինչպես տեսնում ենք, մետալուրգիան միակ ճյուղն է, որ մեր երկիրը կարողանում է կազմակերպել արդյունավետ արտահանում և կատարել ակտիվ ներճյուղային առևտուր: Փաստորեն այս ճյուղի գործարանների վերագործարկումը նախկին հզորություններով հնարավորություն կտա բազմապատկել ձեռքբերված հաջողությունները: Գունավոր մետալուրգիան այն ոլորտն է, որում Հայաստանը մասնագիտացել է վերջին տասնամյակների ընթացքում, և, չնայած մետալուրգիական հզոր ձեռնարկությունների թերբեռնվածությանը, շարունակվում է այս ոլորտի թողարկած արտադրանքի արտահանումը դրական հաշվեկշիռով:

Այսպիսով, այս ճյուղի արագ զարգացումը կարող է մեր հանրապետության համար դառնալ այն նյութական բազան, որի հիման վրա կարելի է զարգացնել մյուս ճյուղերը: Ամենայն հավանականությամբ, հիմնական ներդրումները պետք է կատարվեն այն ոլորտներում, որոնց գծով արդեն իսկ Հայաստանը հասել է որոշակի հաջողությունների, և առկա է արտադրական բազան:

Որոնք են այն ճյուղերը, որտեղ Հայաստանը կարող է ձեռք բերել համեմատական առավելություն մոտ ապագայում: Այս հարցին պատասխանելու համար մենք պետք է հաշվի առնե՛նք հետևյալ գործոնները.

Նախ բնական ռեսուրսները, որոնք գոյություն ունեն Հայաստանում. տարբեր տեսակի հրաբխային ապարներ և գունավոր մետաղներ:

Երկրորդ, գիտական ներուժը: Ցավոք, բարձր որակավորում ունեցող մասնագետներից շատերը 10 տարվա գործազրկության պատճառով կորցրել են իրենց մասնագիտական ունակությունները կամ, լավագույն դեպքում, մեկնել են այլ երկրներ և գտել համապատասխան աշխատանք արտասահմանում:

Վերջապես, արտադրական ներուժը և զարգացած տնտեսական ենթակառուցվածքը, որ Հայաստանը ժառանգել է նախկին ԽՍՀՄ-ից: Թեև գործարաններից շատերը սարսափելի վիճակում են և կարիք ունեն հսկայական ներդրումների, սովորաբար ավելի հեշտ և էժան է վերակառուցումը, քան նորի հիմնումը:

Վերը նշված առավելությունները արդյունավետորեն համատեղելով արտաքին ներդրումների հետ՝ Հայաստանը հնարավորություն կստանա վերանասնագիտանալ ԽՍՀՄ ժամանակաշրջանում ունեցած հիմնական արտադրատեսակների գծով՝ հաստոցաշինության, սարքաշինության, կառույց և-ռետիստեխնիկական իրեր, կոշիկեղեն և այլն:

Այնուամենայնիվ շատ դժվար է վերջնական եզրակացություն անել, թե որտեղ են ընկած երկարաժամկետ համեմատական առավելությունները: Տնտեսական ներկա իրավիճակը և այն փաստը, որ գործարաններից շատերը ժառանգել են հիմնական ֆոնդերը և չեն վճարել ակտիվների համար, ձևախեղում են թողարկվող արտադրանքի հարաբերական



գները: Ճյուղերը, որոնք ունեն համեմատական առավելություն այսօր կամ ԽՍՀՄ ժամանակ, կարող են վաղը չարտադրել մրցունակ արտադրանք: Սա հատկապես վերաբերում է կապիտալատար ճյուղերին: Մինչդեռ այն ճյուղերը, որոնք թողարկում են գլխավորապես աշխատատար արտադրանք, կարող են վերցնել երկարաժամկետ համեմատական առավելությունների պատասխանատվությունը: Երկրորդ, հսկա գործարան՝ մեծ ակտիվներով, դեռ չի նշանակում որակ և մրցունակություն:

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշված առավելությունները և թերությունները՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանի և հետևապես նաև մյուս նախկին խորհրդային հանրապետությունների համար ավելի հեշտ կլիմի համեմատաբար կարճ ժամկետում հասնել արդյունավետ տնտեսական ցուցանիշների, քան մյուս զարգացող երկրների համար: Մի բան, որ մեծ պահանջարկ ունի այս երկրներում, խելամիտ տնտեսական քաղաքականությունն է և խաղաղությունը:

**Г. С. СЕДРАКЯН - Армения в нынешней системе международного разделения труда.** - В статье рассматриваются две модели определения места одной отдельной страны в системе международного разделения труда. Для этого в работе представлены два практических подхода анализа и расчета коэффициентов "сравнительных преимуществ" и "межотраслевой торговли". Определение сравнительных преимуществ страны позволяет сосредоточить внимание государства на тех отраслях, которые более конкурентоспособны и имеют перспективу дальнейшего развития. Но при этом невозможно однозначно определить роль каждой отрасли в народном хозяйстве страны без глубокого анализа каждой отрасли в отдельности. С этой целью и рассчитывается коэффициент межотраслевой торговли, который позволяет определить реальную конфигурацию структуры внешней торговли данной страны.